չէ, եւ բոլորի ներկայութեամբ դանակով ճեղքում է փորը, մի արարողութիւն, որ կոչւում է «խարակիրի»: Ասենք՝ այդ սովորութիւնը արդէն աւելի մօտաւոր անցեալի պատմութեանն է պատկանում, քան թէ ներկային, որովհետեւ այժմ արգելւած է կայսերական հրամանով:

Ընտանեկան կեանքը Ճապոնում հոսում է իր պարզ ու որոշ հոսանքովը: Ընտանիքի անդամների փոխադարձ յարաբերութիւնը մեղմ է ու ընկերական, թէեւ շատ պարզ զգալի է հօր վերին իշխանութիւնը: Նա է, որ հսկում է բոլորի վարքին ու հետեւում խստիւ, որ բոլորն էլ իրար հետ լինեն բարի, սիրալիր ու հոգածու:

Եթէ մէկը անկիրթ է կամ վատ քաղաքացի, հանրային կարծիքը նրա հօրն է դատապարտում:

Հայրը կատարեալ իրաւունք ունի որդուն տնից դուրս վռնդելու ու զրկելու նրան բոլոր իրաւունքներից, եթէ տեսնում է, որ իր խրատները իզուր են անցնում: Նրա տեղը նա մի որդեգիր է վերցնում: Որդեգիրը ընդհանրապէս մի շատ սովորական երեւոյթ է Ճապոնում:

Որդին էլ վարւում է նոյն կերպով. երբ հայրը նրա հետ չափազանց անհոգ է վարւում, նա հրաժարւում է իր հօրից ու հայրագրում մի ուրիշի:

Որդուն պսակելով հայրը տալիս է նրան տան կառավարութիւնը եւ կարծես ինքը մտնում է նրա հովանաւորութեան տակ, ի հարկէ՝ վերապահելով խորհրդատուի դերը: Բայց դրանով նա ոչինչ չի կորցնում, քանի որ, ինչպէս յիշեցի, ծերութիւնը խիստ մեծ յարգ ունի Ճապոնում: